


« Յայսքան ծաղկանցս յարդարեալ էր իւրն այն. յաղագս յայսմ յոյժ ազնիւ էր և պատուական. Նովա օծեալ են Ահաբոն և որդիքն իւր ի քահանայութիւն. Նովա Սամուէլ մարգարէն էօժ զՍաուդ և զԴաւիթ ի թագաւորութիւն. Նովա օծին Սաղովկ և Նաթան մարգարէն զՍօզոմոն. Նովա օծ Եղիսէ զՅէու թագաւոր ի վերայ իսրայելի և զԱղայէլ թագաւոր ի վերայ ասորոց. Նովա կրնն պոռնիկ օծ զտոն Գրիստոնի ի տուն Սիմոնի. Նովա և քոյրն Ղազարու Մարիամ օծ զՅիսուս. ընդ որ զայրացեալ Յուդայ ընդ հրաշագոյն իւղոյն և ասէր. Թէ պարտ էր վաճառել երեսուն դահեկանի և տալ աղքատաց. Զայս իւրս կանայքն ևս պատրաստեցին ի թաղումն Տեառն. այսքան վասն իւղոյն մեկնութեանն » :



ԱՒԱՆԴԱՎԷՊ ԱԲԳԱՐՈՒ

ՀՄՈՒՏ սրբախօսներ՝ Հ. Ֆէոնան Գաբրու լի առաջնորդութեամբ ի լոյս կ'ընծայեն 1907 թուականէն սկսեալ Քրիստոնէական Հնախօսութեան և Եկեղեցական պաշտամանց Բառագիրքը Բարիգու մէջ: Առաջին պրակին մէջ՝ էջ 87 մեզ կը հետաքրքրէ Արգարու աւանդավէպը, որուն ծանօթութիւնները զանց ընելով, գրութեան համառօտութիւնը միայն մեր ազնիւ հնասէր ընթերցասիրաց կը փափագինք ծանօթացնել: Գրոյս հեղինակն է Հ. ԼԵՐԷՔԵՐ, Առաւել հետամուտը կրնան օգտուիլ ևս Վ. Հ. Տաշեանի Զեռագրաց Յուցակագրքէն, Արգարու, Ղերուբնայի ևն ծանօթութիւնները նայելով:

Հ. ԼԵՐԷՔԵՐ՝ Աւանդավէպս կը բաժնէ հինգ էջերու. Ա. Գրական պատմութիւնը կ'ընէ. Բ. կը խօսի պտուռնակութեանը վրայ. Գ. անոր ընդլայնումը կ'ընէ. Դ. կը զնէ անոր պատմական արժէքը. Ե. կը վերջացնէ՝ անոր եկեղեցական պաշտամանց մէջ ունեցած դերը պատմելով:

Եւսեբիոս կը պատմէ, աւանդութենէ առնելով, որ Ռարոյնաց տեղապետը (փոխարքայն) նամակ կը գրէ իր ժամանակակից Յիսուսի, և երեք յիշատակարաններ կը ներկայացնէ. Ա. Արգարու նամակը առ Յիսուս. Բ. Յիսուսի պատասխանը և Գ. Մինչև մեր օրը հասած կենդանագիրը: Արգարու անծին նկատմամբ մասնաւոր կերպով պիտի խօսուի՝ Եղեսիոյ վրայ գրուած ժամանակ. իրեն նկատմամբ աւանդավէպը մեծ արձագանգ ունեցաւ՝ առեւելքի և արևմուտքի մէջ:

Ա. Աւանդավէպիս գրական պատմութեանը:

Նախ Եւսեբիոս կը պատմէ, որ իր ժամանակը թղթակցութեանցս սկզբնագիրները կը գտնուէին Եղեսիոյ դիւանին մէջ ասորի լեզուով: Քիրըթոն 1864ին կը գտնէ անկատար բնագիր մը և կը հրատարակէ Քրիստոնէական թանգարանին մէջ գտնուածին համեմատ, որոնք երկու օրինակներ էին (թիւ. 14654 և 14644): Կատարեալ բնագիրը կը գտնուի (գործ Զ. Դարու) Բեզրասպուրի կայսերական Գրատան մէջ, զոր կը հրատարակէ 1876ին Ֆրիլպս:

Կայ հայ թարգմանութիւն մը հինգերորդ դարուն մէջ եղած, որ հաւատարիմ թարգմանութիւն մ'է՝ բացի վերջին կտորէն, որուն մի մասը նախ զաղղերէնի թարգմանուած և լոյս տեսած է և ապա Ալիշան նոր հրատարակութեամբը ամբողջացուցեր է:

Եւսեբիոս՝ եկեղեցական պատմութեան մէջ կ'ըսէ, թէ ինքը ասորերէն բնագիրէն բառ առ բառ յոյն դարձուցեր է թղթակցութիւնս: Արդ յոյն՝ երկու ազատ թարգմանութիւններ ունի, երկուքն ալ աւելի ամփոփ քան ասորականը:

Աւանդավէպիս վրայ կան խօսող՝ հին և նոր հեղինակներ, զլիաւորաբար ասորի, հայ, յոյն, լատին, արաբ, պարսիկ, որոնք կ'արժէ ակնարկ մը տալ հարեանցի կերպով:

ԱՍՈՐԻ. — Ս. Եփրեմ († 373) կը խօսի Կտակին և Եղեմիոյ մէջ եկեղեցւոյն վրայ գրութեանց մէջ, Յակովբ (Սրճեցի) Սաբուզ (452-521) Արգար թագաւորին և Աղղէ հայրապետին վրայ յօրինած ներբողներն ևն մէջ, Ժամանակագիր Սինակեաց Յեսուայ (507), Ժամանակագիր Թեմար Դիոնիսիայ († 845), Մար բար Սողոմոն (1135), Սողոմոն Բասոր (1222), Բար Էբբէոս († 1286), Ամրոս բար Մատթէոս (1340), վկայարանութիւնք Ս. Մարի (Ե կամ Զ դար). և այլն, կը խօսին ոմն սակաւ և ոմն աւելի փոփոխութեամբ:

ՆԱՅ. — Մովսէս Խորենացի (470) Հայոց Պատմութեան մէջ, և այլն, զրեթէ սկզբնազրին կը հետեւի:

ՅՈՅԼ. — Պրոկոպիոս Կեսարացի († 565), Եւաք (593), Ս. Յովհ. Դամասկոս († 760), Գէորգ Սինգեղոս (Ը. դար), Թէոդոր Ուսանող († 826), Լևոն Քերական և այլն, ոմն ընդարձակ և ոմն շատ յաւելումներով կը նշանակեն:

ԱՏՆԻ. — Փրանկ Նժդեհուհին Սիլվիա (379-395). Կոմս Դարիոս, նամակ առ Ս. Օգոստինոս (429). Գեւորսիոսի վճռոց հեղինակն (496?). Կեղծ Արդիաս (Զ. դար). Աղրիանոս Փահանայապետ (787), և այլն:

ԱՐԱՐ. — Տ'իբն-էլ-Աղիր Ժամանակագիր (1160-1233), Վատիկանեան Գրատան ձեռագիր 174. Բրիտանական Թանգարանի ձեռագիր 9965, և այլն:

ԱՐԱՐՍԻԿ. — Հերոնիմոս Փապիէ (1617) և այլն:

Կան աւանդավէպի շատ լեզուներով թարգմանութիւնները, ինչպէս Գաղղիական, Անգղիական, Շուէտեան, Գերմանական և այլ ներհուն ճննադատներու՝ լի ծանօթութեամբ, զորս զանց կ'ընենք:

Բ. Աւանդավէպիս պարունակութիւնը.

Մասնաւորապէս նկատողութեան առնելու երկու աղբիւր ունինք. առաջինն է Եւսեբիոսինը, որ Եղեմիոյ զիւանք գտնուող

ասորական ընազրէն թարգմաներ է Յունարէնը. և երկրորդն է Աղղէի վարդապետութիւնը, որ պատմութեանս ժամանակակից հեղինակի մը գործ կը թուի:

Արդ Եւսեբիոս այսպէս կը գրէ. **Արգար** թագաւոր, որ կ'իշխէր Եփրատէն անդիի ազգերուն, հիւանդութեան չարաչար ցաւերով տանջուած, իր ծառաներէն աղաչաւոր մարդ կը զրկէ նամակով մը Յիսուսի, որպէս զի զայ Եղեմիա, և բժշկէ զինքը իր հիւանդութենէն, Յիսուս կը հրամարի, բայց նամակով մը կը խոտաւանայ, որ իր աշակերտներէն մէկը պիտի զրկէ զինքը բժշկելու համար, թողո՞ւն՝ եօթնասունն աշակերտներէ մէկը, կը ստանձնէ առաջելութիւն՝ Յիսուսի համարձմանէն վերջը՝ թովմաս առաքելոյն թելադրութեամբը, Եւսեբիոս կը յաւելու որ Եղեմացոց քաղաքին զիւանին մէջ կայ յիշատակարանս, ուր կը գտնուին վաղեմի գործեր, ինչպէս նաև Արգարուն և որոնք մինչև ցայսօր կան ու կը մնան, որոնցմէ ինքը ասորեւրէնէն յունարէն թարգմանք է՝ բառ առ բառ՝ նամակներս: Բեղդսպուրկի մէջ զբառնուած ձեռագիրը կը հաստատէ Եւսեբիոսի թարգմանութեան հաւատարմութիւնը, ինչու որ զրեթէ Նոյն և նմանն է Եւսեբեան թարգմանութեան:

Աղղէի վարդապետութիւնը Այս երկրորդ աղբիւրը Եւսեբիոսինէն աւելի մանրամասն կը ընէ աւանդավէպը: Արգարու նամակին մէջ կը նշանակէ, որ Եղեմիոյ իշխանիս զեապանք՝ Անան, Յիսուսի կը հանդիպի Դամադիէի տան մէջ և կ'ընթեռնու իրեն գրուած թուղթը: Ահա թարգմանաբար երկու աղբիւրներուն պարունակութիւնը:

Ե-ԵԻ-

ԱԳԵԻ ԼՐԳԱՊԵՆԻՆՆ

Արգար, Եղեմիոյ տեղապետ, առ Յիսուս բարի փրկէ, երեսոց Երուսաղէմ աշխարհին մէջ, ողջոյն: Լսեցի որ վրաք և բժշկութեան ներուշ մասին կը խօսին, թէ ինչպէս առանց դեղերու և առանց բժշկական քոյսերու ըսած բժշկութիւններուգ վրայ: Վասն զի ինչ որ կ'ըսուի, կոյրերուն լոյս կու տաս,

Արգար Ուրմայ, առ Յիսուս, Տէրն իմ, որ երեսոց Երուսաղէմ աշխարհին մէջ, ողջոյն: Լսեցի որ վրաք և բժշկութեան ներուշ մասին կը խօսին, թէ ինչպէս առանց դեղերու և առանց բժշկական քոյսերու ըսած բժշկութիւններուգ վրայ: Վասն զի ինչ որ կ'ըսուի, կոյրերուն լոյս կու տաս,

կազմեր կը քաշեցնեն, բո-
րոտները կը սրբեն, կը
կաթածնա անմաքուր ողբե-
հերք և դեկոր, կ'առողջ-
նացնեն հին հիւանդութիւն-
ները, և կը յարուցանեն
մեռեալները, Արդ այս ա-
մենք յախով քեզ համար,
խորհրդածոյից այս մեղիւ
քանք միայն, կամ Աս-
տուած ևս, որ երկնքէ ինք
այս քաներս կ'ընեն, և
կամ որդի Աստուծոյ ես,
որ կը զործես:

Ասոր համար է ուրիշն,
որ քեզ կը դրած ազանե-
լով, որ զաս իմ քովս, և
քուծան ունեցած հիւանդու-
թիւնս: Այսան գի լսեցի
որ հրէաները ևս քեզ գէտ
կը տրտնջին և կ'ուզեն
քեզ չարքը ընել: Ունիմ
չառ փոքրիկ քաղաք մը,
քայքայ գեղեցիկ, որ երկուք-
նոսս պիտի բլլայ քաւս-
կան:

**Ընթերցասիրաց կը ներկայացնենք նաև
Եւսեբեայ հայ թարգմանութիւնը և Մովսէս
Խորենացւոյն մեզ աւանդած Արգարու Նա-
մակը:**

Ի-տ-ի-ի-

Խ-ր-են-աց

Արգար՝ իշխան Եշե-
սիւյ, Յիսուսի փրկիչ քա-
րեարքի որ երեկեայ յաշ-
խարհին Նորոստաղծացոյց,
ողջոյց:

Լուսւլ է իմ վասն քո
և վասն թշկուծիանդ, որ
լինին ի ձեռս քո առանց
գեղոց և արմատոց, զի
որպէս ասի՝ տաս զու-
կուրաց տեսանել և կաղաց
զնայ, զբորոտս սրբան, և
գնասս պիղծու և դես նա-
նես, և որ միանգամ չարս-
չարեալ են ընդ երկար
հիւանդութեանք՝ թշկու
դու, և զմեռեալս յարու-
ցանես: Եւ իբրեւ լուսւլ
վասն քո զայս ամենայն,
եզդ ի մոր խնում մի
յերկուց, կամ թէ դու
Աստուած իցես ինեւլ
յերկնից և զործես զայդ-
ը, և կամ որդի Աստուծոյ
վասն և զայդ անեն: Արդ
վասն այսորից զերցի ես
աղաչել զքեզ, զի աշխատ
լիցիս և եկեացես առ իս,

կազմեր, կը սրբեն բորոտ-
ները, և լսիկ կու տաս իսու-
սիբուն, քեզից խոսեցողդ
կը թշկուս հոգիները, չար-
չար ող լուսնոսաներեն և
դեկորեն, և ինչպէս նաև
կը յարուցանեն մեռեալ-
ները, իս յախով այս բրած
մեծանեծ հրաշքն երդ-
միաքս գրի, որ կամ Աս-
տուած ևս երկնքէ ինեւ
և կը զործես գնառք, կամ
Աստուծոյ որդի ես, որ
կ'ընես այս մեղները:
Ասոր համար կը գրեմ քեզ,
և կ'աղաչեմ, զայ իմ քովս-
քեզ կ'երկուրեալս որ թշկ-
կն կ'ըսէ հիւանդութիւնս
քո վրայ: ունեցած նա-
ւաստիս համեմատ: իմա-
ցայ նմանապէս որ հրէայք
քեզ չարք կը տրտնջան և
զքեզ կը նալածեն և կ'աշ-
խատին զքեզ իսաշին, և կը
մտածեն զքեզ կորսնցնել:
Ունիմ միայն փոքրիկ
քաղաք գեղեցիկ քաղաք մը,
քաւսկան՝ երկուքնոսս, իսա-
ղաղութեանք նոս քնակե-
լու համար:

Արգար Արշամայ իշ-
խան այլաբար, առ Յի-
սուս փրկիչ և բարեբար,
որ երեկեայ յաշխարհիդ
Երուսաղեմացոյց, ողջոյց:
Լուսւլ է իմ վասն քո
և վասն թշկուծիանդ, որ
լինին ի ձեռս քո առանց
գեղոց և արմատոց, զի
որպէս ասի, տաս զու-
կուրաց տեսանել, և կա-
ղաց զնայ և զբորոտս
սրբել, և զայսս պիղծու
անես, և որ միանգամ
չարչարեալ են երկար
հիւանդութեանք՝ թշկու
դու և զմեռեալս յարու-
ցանես: Եւ իբրեւ լուսւլ
վասն քո զայս ամենայն,
եզդ ի մոր խնում մի յեր-
կուց ասար, կամ թէ դու
Աստուած իցես, ինեւլ
յերկնից զործես զայդ-
ը, կամ թէ որդի իցես դու
Աստուծոյ, և զայդ անես:
Արդ վասն այսորից զքե-
զի ես առ քեզ՝ աղաչել
զքեզ, զի աշխատ լինիցիս

և թշկուցես զհիւանդու-
թիւնս, զոր ունիմ ես:
Նաև լուսւլ, զի Հրեայք
արտնջեն զքեզ և կամին
չարչարել զքեզ: Յայց
քաղաք մի փոքրիկ և գե-
ղեցիկ է իմ, և քաւսկան
է մեզ երկուրեանցս:

**Արգարու գիրն ունի իր պատասխանն
Յիսուսի կողմանէ: Եւսեբեոս գրով պա-
տասխան մը, իսկ Աղդէի վարդապե-
տութեան մէջ կը գտնենք բերանացի պա-
տասխան մը զրեթէ նոյն իմաստով: Ահա
երկուքին ալ թարգմանութիւնը:**

Ե-տ-ի-ի-

Վ-արգարու-թիւն Արգի

Յիսուսի պատասխանը
Անան ստորանալի մի-
շոցով առ տեղապետ Աք-
գար:

Երանի առանց զիս առն-
ն եւ լու հաւատարացոյին:
Վասն զի գրուած է իմ
մասին, որոնք որ զիս
պիտի տեսնեն՝ պիտի չնա-
ւանան ինձ, որպէս զի
անոնք որ զիս պիտի չտես-
նեն՝ հաւատան և ապրին:
Ինչ որ ինձ զրեցիք զայ
քեզ՝ պէտք է որ ըստի
նոս այն ամէնը՝ ինչ քանի
համար որ զրկուած եմ, և
զայն կատարելու վերջը,
պիտի բարեբանեմ ես զքեզ
ի այն՝ որ զիս զրեցի է:
Եւ նոս բարեբանելու
վերջը, քեզ պիտի զրեցիմ
եւ աշակերտեմքս մին,
որպէս զի թշկէ հիւանդու-
թիւնդ և քեզ ևս քուկին:
ներուդ ապ ինեւ:

Յիսուսի պատասխանը
Անան ստորանալի մի-
շոցով առ տեղապետ Աք-
գար:

**Կարևորութենէ զուրկ չէ Եւսեբեայ հայ
թարգմանութեան և Խորենացւոյ Պատմու-
թեան մէջ նամակիս հետեւեալ պատճենը:**

Ե-տ-ի-ի-

Խ-ր-են-աց

Պատասխանի թղթոյն
ի Յիսուսէ ի ձեռն Անա-

Պատասխանի թղթոյն
Արգարու, զոր գրեալ թա-

նիսյա ստորնազակի առ Արզարի բշխան:

Երանի իրէ, Արզար, այնովի որ հաւատայն յիս իբր ոչ իրէ տեսնալ զիս, զրեւալ է վասն իմ' այս. պէտ. զի որ տեսնիցեն զիս, ոչ հաւատացեն յիս, և որք ոչն տեսնիցեն զիս, նոցա հաւատացեն և կեցցեն: Իսկ վասն այսր զի գրեցիք դու առ իս դալ՝ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցիք ես. և իբրեւ կատարեցիք զայս՝ ապա վերացայց առ այն որ ասա. քեանց զիս, և յորժամ վերացայց՝ առաքեցիք քեզ իմ յաշակերտաց աստի իմոց, զի զգտա թո՛ւք ընդ ինչէ, և կհանա տայց քեզ և որ միանգամ ընդ քեզ են:

մաս առաքեալն հրամանաւ փրկելն:

Երանի իրէ աշխմ, որ հաւատայ յիս, իբրեւ ոչ իրէ նորա տեսնալ զիս, զի զրեւալ է վասն իմ' այսպէս. Զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատացեն յիս, և որք ոչ տեսանեն՝ նոցա հաւատացեն և կեցցեն: Իսկ վասն այն զի գրեցիք դու առ իս՝ դալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցիք ես: Եւ իբրեւ կատարեցիք զայս, ապա հաճարձայց առ այն, որ ասաքեանց զիս, և յորժամ համարձայց, առաքեցիք իմ յաշակերտաց աստի իմոց, զի զգտա թո՛ւք բոլորէ, և կհանա քեզ և որք ընդ քեզ են՝ շնորհեցի:

Այս երկու նամակներուն սկզբնագիրն, որ պէտք է ըլլայ Լարուրնայ, ինչ ինչ տարբերութիւններով կը զտնուի թէ՛ Ս. Ղազարի և թէ՛ Երուսաղիմայ տպագրութեանց մէջ, որ այս է.

« Արզար Արշամայ առ Յիսուս բժիշկ և մեծ, որոյ երևեալ յերկիրդ Հրէաստանի և ի քաղաքիդ Երուսաղէմ: Տէր լուսայ վասն և քո և վասն բժշկութեանցդ՝ զոր առնես. և զի ոչ դեղովք և արմատօք բժշկիս դու, և այլ բանիւ զկոյրս լուսաւորես, զկազս և զնացուցանես և զորոտոս սրբես, և իւրից և լսել տաս, և զդէս հալածես, և զմեռանալ յարուցանես, և զամենայն չար և չարեալս և զախտաժէտս բանիւ բժշկես: Եւ իբրեւ լուսայ ես զայսպիսի մեծամեծ և սքանչելիս զոր առնես դու, եղի ի մտի և իմում և հաւատացի թէ Աստուած ես և դու և որդի Աստուծոյ, որ իշեր և յերկնից և առնես զայդ ամենայն. վասն և այսորիկ գրեցի առ քեզ աղաչանս՝ և զալ քեզ առ իս, զի երկիրպագից և քեզ, և բժշկեացես զիս ի ցաւոց և ի հիւանդութենէ իմէ, որպէս հաւատացի և ի քեզ: Եւ զայս լուսայ եմք Հրէայք և տրանջնե զգէն, և հալածեն զքեզ, և և կամին կորուսանել զքեզ. քաղաք մի է և իմ փոքրիկ և վայելուչ, և բաւական

« է երկոցունց մեզ բնակել ի մա իս. « զաղութեամբ »:

Սկզբնագիրս կը յաւելու, որ Յիսուս այս գիրս ընդունեցաւ. Հրէից փահանա, յապետին տանը մէջ, և կ'ըսէ արքային հաւատարմի Անանի. « Երթ և ասա Տիառն և քում, որ առաքեացն զքեզ առ իս. Եւ քանի է քեզ, զի հաւատացեր յիս մինչև և տեսնալ քո զիս. զի այսպէս զրեւալ է վասն իմ, զի որք տեսանեն զիս՝ ոչ և հաւատան, և որք ոչ տեսանեն՝ հաւատացեն: Եւ զի գրեցիք դու առ իս և զալ ինձ առ քեզ, վասն որոյ առաքեցայ ես յաշխարհ. կատարեալ է ամեն և նայն: Այստեհտն վերանամ առ հայր և իմ որ առաքեացն զիս, և յորժամ վերացայց առ նա, առաքեմ առ քեզ մի և յաշակերտաց իմոց, զի բժշկեացէ զքեզ և և զամենայն ժողովուրդ քո որ ընդ քեզ, և և զարձուսցէ զձեզ ի կեանսն յաւիտեանականս. և քաղաքդ քո օրհնեալ լիցի, և և թշնամի մի տիրեսցէ դմա յաւիտեանս »:

Դիտնալով զարձեալ համառոտագրութեան, Հ. Լըճէրը կ'ըսէ, որ ըստ վարդապետութեան Ողտէի՝ Անանի կը զրէ Յիսուսի կողմանէ պատասխանը, մինչդեռ Եւսեբիոս կը համարի, որ Յիսուս ինքնին զրեց պատասխանը: Ասոր նման է նաեւ Յիսուսի կենդանագրին պատմութիւնը, Անանի քարտուղար թագաւորին և արուեստաւոր՝ կը նկարէ զՅիսուս և կը տանի Եղիսիս, ուր կը համարուի որ պատկերն իսկ Յիսուսի գործն ըլլար:

Աւանդավէպիս թուականը կարեւորութենէ զուրկ է, ինչու որ առաջին դարերու ժամանակագրութիւնն անստոյգ է:

Եւսեբիոս կը դնէ Սեւեակիացոց 340րդ թուականին, որ է ըսել Քրիստոսի 293րդ տարին:

Գ. Բլուլլիսումն սուանդալէպիս.

Եւսեբեայ և Ողտէի վարդապետութեան հրատարակութիւնը մեծ և երևակայական ընդարձակութիւն մը տուին աւանդավէպիս ամէն մի անցքին, կարելի է ըսել, որ այս երկուքն եղան ամենուն աղբիւրը:

Եւսեբրիոս կը գրէ, որ Արգարու հիւանդութիւնն անբուժելի էր, և Ազգէի վարդապետութիւնը կ'ըսէ վաղեմի հին հիւանդութիւն. և ահա թէ՛ողոր, Համարթուս, Լևոն սարկաւազ, Նիկիփոր Գալիսդոս և այլն՝ շատ մը հիւանդութիւններով վարակուած կը համարին. Մովսէս խորենացի կ'ըսէ եօթը տարիներէ ի վեր ունէր և Պարսկաստանի մէջ առեր էր ախտաւ Պրոկոպիոս և այլք յողացաւ կը կարծեն, Արդիոս նման Ամրոս կ'ըսէ, որ բորոտութիւն էր, ինչպէս կը յայտնէ, իր Ուքամա մականունը, որ սև կը նշանակէ. մինչ Բար-Էրէնոս կը զնէ մականունս Ուքամա, և բորոտութիւնը սպիտակ վերջապէս կեղծ կոստանդինոս, Կեղրենոս և Մար Սողոմոն կ'ըսեն, որ Արգար վարակուած էր բորոտութեամբ և յողացաւութեամբ:

ա. Արգարու առ Յիսուս գրոյն նկատմամբ ինչ որ Գործք Թաղէի մեզ կը ներկայացնէ՝ չի յիշատակեր Յիսուսի աստուածութեան և Թագաւորին հիւանդութեան վերաբերեալ բառերը: Հերոնիմոս Գաալիէի իր պատմութեան մէջ տեղական աւանդութեանց հետեւելով կը համարէ որ բնագիրն ըլլայ այսպէս. « Լսեցի որ « կը խօսին սուրբ վարուցը և գործած « հրաշքներուդ վրայ և աւելին, որ Հրեայք « զքեզ կը հալածեն և կ'ուզեն զքեզ « սպաննել, Պիտի համապատասխանէ փա- « փազիս, թէ որ որոշես զալ իմ աշխարհս: « Եւ ես կը խոստանամ քեզ տալ թա- « զաւորութեանս կէսը, և քեզ արժանաւոր « կեանք վարել տալ եթէ պատուելու « ըլլաս երկիրս »:

բ. Յիսուսի առ Արգար նամակին նկատմամբ Աղդէի վարդապետութիւնը գրի մը վրայ խօսք կ'ընէ, բայց չ'ըսեր՝ որ Անան ուր և երբ գրեց. Եւսեբրիոս պայծառ կերպով չ'ըսեր բայց կը հասկնէ, որ Յիսուս գրեց կամ զրուցագրեց պատասխանը:

Գործք Թաղէի կ'ընդունի ինչ որ կը գրէ վարդապետութիւն Թաղէի, բայց բազմաթիւ հեղինակներ՝ Եւսեբի աւելի հետեւող են, ինչպէս Յակոբ Սրճեցի, Եւագր և այլք: Թուրքերուս պարագաններուն գալով,

երևակայութիւնն իր ամենամեծ դերն ունեցեր է: Մովսէս Խորենացի կը համարի, որ Թովմաս Յիսուսի խօսքերը գրեց, ինչպէս նաև Մար-Սողոմոն և Ամրոս: Յովհաննէս Բար-Սայիտ և այլք կը կարծեն, որ երկու թուղթերս ասորի լեզուով գրուած են, ըստ ոմանց մագաղաթի և ըստ այլոց պապիրի վրայ: Կան ալ, ընդհանրապէս յոյն հեղինակներ, կը կարծեն թէ Յիսուս ինքնին գրեւ թուղթս և Կեղրենոս կը յաւելու՝ որ իր կնիքով զրոշմեց Յիսուս, որուն վրայ կային եւրոպական եօթն գրեր, որոնց թարգմանութիւնն կ'ընէ բազմահմուտ: Չամչեան վարդապետ «աստուածահրաշ տեսիլ աստուածային հրաշալիք »: Θεοῦ Θεῶν Θεῶν Θεῶν:

Այս երևակայական կամ ենթադրական յաւելումները թղթոյն բնագրոյն վրայ էական փոփոխութիւն մը չեն բերեր: Բացի միոյն, որով կը թուի թէ Յիսուս կ'ապահովցնէ զԵղեսիայն, որ երբեք թշնամիք իրեն պիտի չտրեին: Այս յաւելում ծոյ մասն կը թուի նշանակուած Աղդէի վարդապետութեան մէջ, որուն վրայ ասորի և յոյն և այլ հեղինակներ կերտեր են իրենց ենթադրութիւնները:

գ. Գալով Յիսուսի կենդանագրոյն կ'ըսէ Աղդէի վարդապետութիւնը, որ Անան նկարեց զՅիսուս ընտիր գոյնը: Եւսեբրիոս չի յիշատակեր զայս, բայց շատ հին մատենագիրներ կը հաւատան: Մովսէս Խորենացի Աշխարհագրութեան մէջ Եղեսիոյ համար կ'ըսէ, որ կը ժառանգէ Յիսուսի անձեռագործ պատկերը: Եւագր, Գէորգ Սինգեղոս և ուրիշներ կ'ըսեն, որ պատկերիս հեղինակն էր Աստուած: Ս. Յովհ. Դամասկացի, Նիկիփոր և ուրիշներ կը պատմեն, որ Անան ուզեց նկարել զՅիսուս, բայց իրեն աստուածային գերբնական նշոյշներուն յարափոխի տուրքերուն պատճառաւ կարող չեղաւ լրացնել: այն ատեն Յիսուս կտան առաւ, դրաւ դէմքին վրայ, ուր տպաւորուեցաւ մէկէն իր կենդանագիրը: Կան որ կը խառնեն սրբունչի վերոնիցայի դաստառակին պատ-

մութիւնը ասոր հետ, և են՝ ինչպէս վարդան վարդապետ և Իրն—էլ—Աղիւր, երկու աւանդալէպները ի մի կը ձուլեն, կ'ըսէ վարդան՝ Եղեմիա, որ է Ռւհա քաղաքը, ուր կայ Յիսուսի Գրիստոսի անձնագործ նկարը, և որ է սրբունի Վերոնիքայինը, Հինգերորդ դարուն Մեծն Մակար կը հաւատէր թէ Վերոնիքա էր Եղեմիայի իշխանագուն մը, և թէ նա էր Աւետարանի տեղադրողը, որ Յիսուսի պղնձէ արձանը կանգնել տուեր էր: Պատկերս այժմ կը գտնուի միանգամայն Հոլմ և Ճե. նովա:

Յիսուսի և Արքայու Թղթերէն կրնանք իմաստասիրել իրական պատմութիւնս, թէ՛ առաքելական ժամանակէն Ուրոյնեանց աշխարհին մէջ մուտ գործեր էր քրիստոնէութիւնը:

Աւանդալէպիս Արքայու հիւանդութիւնը՝ կարծես ներշնչած է Տրդատայ և Կոստանդիանոսի հիւանդութեանց անցքերուն և բժշկութեանը: Հէթանոս արքայն Արքայ, ինչպէս հալածիչ Տրդատ և Կոստանդիանոս՝ վատ հիւանդութեամբ կամ բորստութեամբ և յիմարութեամբ իբրակուած են, չկայ դեղ կամ մոգական ճարտարութիւն մը, որ դարման կարենայ տանել. կը դիմեն Աստուծոյ առաքելոյն թաղէի, Գրիգորի, Սեդրեատրոսի. կը բժշկուին, կը մկրտուին կը և դառնան քրիստոնեայ՝ ամբողջ ժողովրդով:

Գ. Աւանդալէպիս պատմական արժէքը.

Հ. Լըբէրը կ'ըսէ. Աւանդալէպիս գրութեան ժամանակն որոշելու համար պէտք է ակնարկ մը տալ նամակին մէջ գտնուած խօսքերուն, առաջին՝ «դու կոյրերուն յոյս կոս տաս, կադիր կը քաղցենս, կը սրբես բորստները», երկրորդ՝ «դու կը հանես անտարբէր հոգիները և դեկը, դու կը բժշկես վաղեմի հիւանդութիւնները» և երրորդ՝ «դու մեռնալները կը յարոցանես»:

1. Մեր Զեռագիրներն մին (Ոսկեհ. Ե) տեղադրողը կը գնէ փառիմա: Ծ. Խ.

Արդ առաջին և երկրորդ մասերը առնուած են Մատթէոս (ԺԱ. 5, 24, Է. 22) և Ղուկաս աւետարանիչներէն (ՂԿ. Է. 21) և երրորդը՝ առաջնոյն ընդհատուածը կը շարունակէ Լըբէրը այս պատճառաբանութեամբ և ենթադրական գիտովը ամբողջ աւանդութիւն մը և դէպք մը անվանարկան կը համարի: Եւ իւր ապացոյցը առաւել հաստատելու համար կ'ըսէ, որ ասորական եկեղեցիները պաշտօնապէս կը գործածէին Տատիանու յօրինած Համաբարբառ աւետարանի թարգմանութիւնը, որ չորս աւետարանները մէկտեղ ձուլեր էր: Արդ Արքայը կը յիշատակէ Համաբարբառի թարգմանութեան հատուածները, Ս. Ե. փրեմի Մեկնութեան համաձայն, և այլն:

Դարձեալ ապացոյց կը համարի անվանութեան գրուածոյն և յետագայ դարու գործ. ինչու որ կ'ըսէ. չի հետևիր Մատթէի (զլ. ԺԱ. 5) յոյն բնագրին, որ է «Խոյը յան, մեռնալը յառնեն, աղքատք աւետարանին», այլ կեղծարարը կը յապաւէ «աղքատք աւետարանին»ը, և ասոր տեղը կը լրացնէ Ղուկաս աւետարանչին հատուածս (ՂԿ. Է. 22), և յայնմ ժամոս բժշկեաց զբազմս ի հիւանդութեանց և ի հարուստաց, և յայտոց յորոց»:

Նմանապէս անվանի գրուած մը կը համարի Յիսուսի պատասխանը առ Արքայ, վասն զի կ'ակնարկէ Յովհաննու Աւետարանչին տող մը, որ է (Ի. 29), «Այդ զի տեսնոց և հաստատցեր. երանի՛ որոց ոչ իցի տեսիլ» և հաստատցեն. կը թուի թէ ներշնչուած է տողէս, «երանիք որք ոչ տեսիլ, և հաստատեալ = Μακάριοι οι μη ὁδόντες, καὶ πιστεύσαντες.

Հ. Լըբէրը այսպէս կը հետեցնէ, որ թուղթերս ձեռքած պէտք է ըլլան երրորդ դարուն կիսուն, վասն զի պատմական տուեալը նպաստաւոր են կարծիքիս:

Ե. Եկեղեցական պաշտամանց մէջ.

Յիսուսի թուղթը մի քանի եկեղեցիներ անցուցեր են իրենց իրաւարաններուն մէջ, ինչպէս Ասորին Մեծ Պահոց պաշտամանց

մէջ, Գիրս՝ իբրեւ յուսումնաբեր զօրծածուած է շատ հին ժամանակէ։ Պարսկական աւանդութիւնը կը համարի, որ Յիսուս խոստացեր է Աբգարու, ուր որ նամակս գտնուի՝ ինքը զայն պիտի պաշտպանէ։ Բրիտանական Թանգարանի լատին ձեռագիրը կը թուարկէ պարագաները, ինչպէս եթէ մէկը իր հետ ունենայ նամակս՝ ապահով խաղաղութեամբ կը շրջի — «Si quis hanc epistolam secum habuerit, securus ambulet in pace»։ Անգղիոյ մէջ, կը պատմէ Քուրդոյն, թէ մինչև այս վերջին դարը սովորութիւն էր, որ տուներու մէջ նամակս կը փակցնէին պատերու վրայ իբրեւ նախապահաստ զեղ։ Դեռ չէ անհետացեր սովորութիւնն կոմսական եր. կիրենբուրո մէջ, և իր հետքը կ'երևի կեղտ ծխաբանին մէջ, ուր Աբգարու նամակէն վերջ դուրս է աղօթքս. «Տէր, Տէր, պաշտ»։ «պանեա զմեզ ի չարեաց, և պահպանեա «զմեզ ի բարիս. զի լիցուց որդիք քո աստ» և ի հանդերձելուսն։ Փրկիչ ամենեցուն, «Քրիստոս, հայեաց ի մեզ, Յիսուս, և «ողորմեաց մեզ», և այլն։

Ս. Հարց մէջ, ինչպէս Ս. Օգոստինոս, Ս. Հերոնիմոս ևն, ընդհանուր կարծիք է, որ Յիսուս երկրիս վրայ իրեն ձեռագիր բան մը թողուցած չէր։

Աւելորդ կը համարի հեղինակը՝ մէջ բերել թղթակցութեան վաւերականութեան պաշտպան հնապատումները, որոնք տեղեակ չէին Աղդէի վարդապետութեան հրատարակութեան։ Իրենց դատաստանը անբաւական ցուցումներու վրայ հաստատուած է։

Ռ. Կ.

~~~~~

«Աշխատէ կամ մեռիր»։ Այս է բնութեան նշանաբանը։ Եթէ դադրիք աշխատել մտաւորապէս՝ կը մեռիք բարոյապէս և նիւթապէս։

Զգայ բան մը որ հաստատամտութեան չափ օգտակար ըլլայ։ Հանճարն իսկ երբեմն կը վարանի, կը խաթարի, կը յոգնի. բայց հաստատամտութիւնը միշտ ապահով է որ պիտի շահի։

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ս. ԿԻՐՈՂԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ

### ԿՈՉՈՒՄՆ ԸՆԺԱՅՈՒԹԵԱՆ

(Շար. տես 1921 թվ. էջ 950)

ԺԶ.

Էջ 26. տող 4. «Ներկաւ մարմին նորա ի ցողոյ երկնից, քանզի մուտ, նայեցաւ ի նոց հրոյն՝ ուր անանիանքն էին. և ետես անդ զցող օդոյն, զի ցողէր, և ոչ սրտի մտօք հաւատաց, այլ յետոյ... որպէս և ինքն պատմեաց»։

Ուղղ. — Նիկաւ ըստ յոյնին, ջնջելի մատ... այլ յետոյ իբրեւ պաշխարարեամբ արդարացաւ (ըստ բնագրին)։

ԺԷ.

Էջ 27. տող 3. «Իցէ ոք, որ ուրացեալ իցէ ըստ Պետրոսին... մինչև խորհուրդան սփռեալ ի վերայք»։ Արտաքոյ երեւ բնարանին և խառնակ՝ որպէս հաւատի համեմատութեամբ այլ և այլ ձեռագրաց։ Ս. Հայրն արանց և կանանց օրինակ ապաշխարութեան կու տայ Նարեկագործնոսր, Դաւիթ և Ռախար. «Արդ եթէ ոք ի մեզ ի հեթանոսաց իցէ, որոյ զքրիստոնեայն հայհոյեալ իցէ... առցէ օրինակ զՆարեկագործնոսր... Եթէ իցէ ոք որ ի ցանկութիւն պղծութեան շաղախեալ իցէ, զերանելոյն զ'Խաթայ զապաշխարութիւնն յանձն առցէ... Արդ՝ կանանց առակ օրինակի իցէ ի փրկութիւն Բախար. և արանց որ միանգամ յառաջագոյն ասացաք, քաջքն և առաքինիքն օրինակ լիցին»։ Պետրոս ոչ ապաշխարութեան այլ ուրացողներուն դարձի օրինակ կը յիշուի, ինչպէս եկաւ մուտ հատուածի մէջ. — Իսկ «որոյ զքրիստոնեայն հայհոյեալ իցէ»։ Լուսագոյն է առել «գրիստոն», ըստ յոյն բնագրին։